

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ
«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՆՈՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ
ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ «այն հարկ վճարողները, որոնք օրենքն ուժի մեջ մտնելու պահին փաստացի կատարել են 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած՝ նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքների վճարումները, օրենքն ուժի մեջ մտնելու պահից ազատվում են այդ ապառքների գծով հաշվարկված և չվճարված տույժերը և տուգանքները վճարելու պարտավորությունից»:

Նշված դրույթի կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, պաշտոնապես պարզաբանում են.

Ապառքի վճարած լինելու փաստը ներառում է նաև այն դեպքը, երբ ապառքը մարվել է ապառքի գումարի չափով մինչև նույն հարկատեսակի գծով դեբետային մնացորդով հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու կամ այլ հարկատեսակի գծով առկա՝ հաշվանցման ենթակա գումարի հաշվին տվյալ հարկատեսակի գծով առկա ապառքը մարվելու փաստով:

Սույնը վերաբերում է մինչև 2011 թվականի հուլիսի 4-ը (Օրենքն ուժի մեջ մտնելու օրը) հարաբերություններին:

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարարության հետ
Վ. Գաբրիելյան
26 դեկտեմբերի 2011 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան
16 դեկտեմբերի 2011 թ.
N 46